Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**
1	2	3	4
	23.	«Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Նոյեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ՀՀ ՏՋՆՆ 14.11.2017թ. N 01/11.3/11245-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: «Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգի հիմնական նպատակն է Հայաստանում ինժեներական քաղաքի հիմնման միջոցով նպաստել Հայաստանում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների (ԻԲՏ) ոլորտի հետագա զարգացմանը՝ խթանելով Հայաստանում տնտեսության մրցունակության և արտադրողականության մակարդակի բարձրացումը:
	43.	«Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Հոկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Լեռնահանքային ոլորտի զարգացումը խթանելուն և մետաղների միջազգային գների տատանումների ազդեցության մեղմմանն ուղղված՝ մշակվել է ռոյալթիների վճարման նոր մոտեցումը: «Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից: - Օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են 2017 թվականի ապրիլի 20-ի N 472-Ն ՀՀ կառավարության որոշմամբ: - 2017 թվականի 23 նոյեմբերին ընդունվել «Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառության առավելագույն սահմանաչափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1492 - Ն որոշումը: - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 06.11.2017թ. N01/16.2/10909-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:
	44.	«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և	**Կատարված է**:

		առնչվող այլ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Փետրվարի** 2-**րդ տասնօրյակ**)	ՀՀ ՏԶՆ նախարարի 03.03.2017թ. Թիվ 02/23.20/4829-17 գրությամբ համապատասխան օրենսդրական փաթեթը ներկայացվել էր ՀՀ կառավարության աշխատակազմ: Մի շարք քննարկումների արդյունքում նպատակահարմար է գտնվել ներկայացված փաթեթը մեկ անգամ ևս քննարկել պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի (Հայաստանի ներգնա տուրոպերատորների միության, Հայ Զբոսավարների Գիլդիա ՀԿ) մասնակցությամբ: Առաջարկվող փոփոխություններով մասնավորապես հստակեցվում են զբոսաշրջության ոլորտում կիրառվող մի շարք հասկացություններ: Նախատեսված են նաև դրույթներ ոլորտի վարչական ռեգիստրի ներդրման և զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման և գրանցամատյանի վարման վերաբերյալ ոլորտում արդյունավետության բարձրացման նպատակով:
	45.	Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուն հաջորդող ամսվա** 3-**րդ տասնօրյակ**)	ՀՀ կառավարության որոշման նախագծի անհրաժեշտությունը նախատեսվում էր, որ կառաջանա «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքով: Վերջինիս նախագիծը ներկայումս քննարկման փուլում է:
	46.	«Ներդրումային ֆոնդ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Մայիսի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Ներդրումային ծրագրերի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ընդլայնման նպատակով Համահայկական բանկը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, վերակազմակերպվել է Համահայկական ներդրումային ֆոնդի՝ Համահայկական վարկային կազմակերպության վարկային ակտիվները փոխանցելով ներդրումային ֆոնդին: Տեղի է ունեցել Համահայկական բանկի 100% բաժնետոմսերի ձեռքբերում «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից՝ արդյունքում դառնալով Համահայկական ներդրումային ֆոնդի կառավարիչ:

	47.	«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ՀՀ ՏԶՆՆ զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի 13.04.2017թ. թիվ 01/15,1/3538-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Ներկայումս նախագիծը վերադարձվել է խմբագրման՝ ըստ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 42 «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման պահանջների:
	48.	«Որոշակի գումարից ավելի ներդրում կատարած օտարերկրացիներին քաղաքացիություն շնորհելու հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Մայիսի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: «Որոշակի գումարից ավելի ներդրում կատարած օտարերկրացիներին քաղաքացիություն շնորհելու հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ ՏԶՆ նախարարի 27.09.2017թ. թիվ 01/010.1.2/9651-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Այնուհետև ՀՀ ՏԶՆ նախարարի 06.12.2017թ. թիվ 01/10.1.3/12082-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել նախագծի լրամշակված տարբերակը:
	49.	«Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների (լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, էկոտուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու և այլն)՝ արդեն իսկ գործող մասնավոր նախաձեռնություններին աջակցության և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ՀՀ ՏԶՆՆ զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի 23.11.2017թ.-ի N 30/15.1/11602-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացման ծրագրին, ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին և նոր ուղղությունների զարգացման երեք ենթածրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Ներկայումս նախագիծը վերադարձվել է խմբագրման՝ ըստ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 42 «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման: Երեք ենթածրագրերն են՝ Քայլարշավային երթուղիների ստեղծում, «Ռուսական հետք» զբոսաշրջային արդյունք և Գինու երթուղին Մետաքսի Ճանապարհին:

	50.	«Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	ՀՀ ՏԶՆՆ զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի 01.12.2017թ.-ի N 30/15.1/11913-17 գրությամբ՝ «Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ներկայացվել էր շահագրգիռ գերատեսչությունների կարծիքի: Ներկայումս նախագիծը վերադարձվել է խմբագրման՝ ըստ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 42 «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման:
	51.	«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	ՀՀ վարչապետի 2017թ. նոյեմբերի 27-ի N 1373-Ա որոշմամբ ընդունվել է «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշումը, որով ստեղծվել է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում Հայաստանի դիրքի բարելավման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատվել դրա անհատական կազմը՝ զեկույցի շրջանակներում Հայաստանում իրականացվող բարեփոխումներին ուղղված միջոցառումների մշակումը և բարեփոխումներին ուղղված միջոցառումների իրականացման նկատմամբ մշտադիտարկման իրականացումն ապահովելու նպատակով: Աշխատանքային խմբի ղեկավարն է ՀՀ ՏԶՆ նախարարի տեղակալ Տիգրան Խաչատրյանը: «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծում ներառելու նպատակով շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները ս.թ. դեկտեմբերի 12-ին քննարկվել են ՀՀ վարչապետի մոտ: Քննարկման արդյունքներով «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը մշակվել է և ներկայումս գտնվում է շահագրգիռ կողմերի հետ քննարկման փուլում:
	52.	««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Մշակվել և ՀՀ շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով առաջարկվում էր սահմանել, որ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի գնի չհիմնավորված բարձրացում կամ պահպանում չի համարվում գնի այնպիսի բարձրացումը կամ պահպանումը, որի արդյունքում այդ ժամանակահատվածի ակտիվների շահութաբերության մակարդակը չի գերազանցում 12 տոկոսը, ինչպես նաև ամրագրել, որ գների չհիմնավորված բարձրացման միջոցով

		(**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	գերիշխող դիրքի չարաշահմամբ տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման ՀՀ պետական բյուջե 7-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասով նախատեսված ակտիվների շահութաբերության մակարդակը գերազանցող գումարի չափով: Շահագրգիռ մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ Նախագծի վերաբերյալ կազմակերպված քննարկումների ժամանակ վերջիններիս կողմից բարձրաձայնվել են մի շարք խնդիրներ՝ գործնականում առաջարկվող կարգավորումների կիրառման հետ կապված: Միաժամանակ, ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Վերոգրյալ նախագծերը քննարկվել են նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, որի արդյունքում պարզ է դարձել, որ վերջիններիս մտահոգող խնդիրները, ըստ էության, կարգավորվում են ՀՀ ՏՄՊՊՀ կողմից մշակված նախագծերի շրջանակներում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ՏԶՆՆ-ի կողմից առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 12.01.2017թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշման N 1 հավելվածի 52-րդ կետը: Հարցը ներառվել է մշտապես գործող ֆինանսատնտեսական կոմիտեի 21.12.2017թ. նիստի (հարց N 16) օրակարգում և արժանացել է հավանության:
	53.	««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Սեպտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2017թ. սեպտեմբերի 28-ի նիստում: Նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ: Օրենքով կատարելագործվում են օտարերկրյա ներդրումների ներգրավման, պաշտպանության և հետներդրումային գործունեության հետ կապված հարցերը: Հստակեցվում են առկա սահմանումները, կատարվում են լրացումներ, տրամադրվում են լրացուցիչ արտոնություններ, ամրագրվում են ներդրողների պաշտպանության նոր երաշխիքներ, սահմանվում է վեճերի լուծման նոր մեխանիզմ:
	54.	«Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	**Կատարված է**: ««Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու

		փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Սեպտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	մասին» ՀՀ օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 28-ի նիստում: Նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ: Օրենքի փոփոխությամբ հստակեցվում են լիազոր մարմնի լիազորությունները, կազմակերպչի և շահագործողների պարտավորությունները, ազատ տնտեսական գոտիների շահագործման հետ կապված հարաբերությունները, ազատ տնտեսական գոտիների սահմանագծին ներկայացվող պահանջները, ազատ տնտեսական գոտիների լուծարման ընթացակարգը, ազատ տնտեսական գոտու սահմանումը և ազատ տնտեսական գոտում մաքսային կարգավորումները համապատասխանեցվում են 2010թ. հունիսի 18-ի մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ) տնտեսական գոտիների և ազատ մաքսային գոտի մաքսային ընթացակարգի հարցերով համաձայնագրի, ինչպես նաև ԵԱՏՄ օրենսգրքի դրույթներին:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները և քայլերը	Գերակա խնդրի քայլերի կատարմանն ուղղված արդյունքները
1	2	3	4
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	53.	**ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ**	
		1) Ներդրումային պաշտպանության մեխանիզմների ուժեղացման նպատակով օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Սեպտեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2017թ. սեպտեմբերի 28-ի նիստում և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Նախագծով հստակեցվում են առկա սահմանումները, տրամադրվում են լրացուցիչ արտոնություններ, ամրագրվում են ներդրողների պաշտպանության նոր երաշխիքներ, սահմանվում է վեճերի լուծման նոր մեխանիզմ: Ներդրվում են առավել բարենպաստ և ազգային ռեժիմները, արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը, ներդրումների պաշտպանության նվազագույն ստանդարտները: Նախատեսվել է պետության հետ առկա վեճերի լուծման ժամանակ այլընտրանքային միջոցների (արբիտրաժի) հնարավորությունը:
		2) Պետություն-մասնավոր գործընկերության զարգացման համար օրենսդրական կարգավորումների վերաբերյալ առաջարկությունների ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (**Դեկտեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) կարգավորման օրենսդրական փաթեթի մշակման գործընթացում Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն հիմնադրամի հետ համատեղ որոշվել էր ներգրավել նաև դոնոր կազմակերպությունների (ՄՖԿ, ՀԲ, ՎԶԵԲ, ԱԶԲ): ՎԶԵԲ կողմից հայտարարվել էր միջազգային փորձագետների ընտրության մրցույթ ՊՄԳ օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի պատրաստման նպատակով: ՎԶԵԲ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում ներգրավված Hogan Lovells և KPMG միջազգային խորհրդատվական ընկերությունների կոնսորցիումի կողմից մշակվել է ՊՄԳ հայեցակարգի նախագիծն ու իրավական դաշտի վերլուծական զեկույցը: - Քննարկվել են նաև պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության իրավական մեխանիզմներին ու գործիքակազմին, հիմնական պայմաններին, ընթացիկ իրավիճակի վերլուծության արդյունքներին, առկա խնդիրներին, ներդրումային ռիսկերին և երաշխիքներին առնչվող հարցեր: Նախագիծը լրամշակվել է՝ ներառելով խորհրդակցության ընթացքում շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների առաջարկությունները: - ՀՀ վարչապետի 2017թ. նոյեմբերի 9-ի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության

			քաղաքականություն» փաստաթուղթը, ըստ որի ՀՀ ՏԶՆ նախարարին հանձնարարվել է մինչև 2018 թվականի փետրվարի 28-ը մշակել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել փաստաթղթից բխող ՀՀ օրենքի նախագիծը:
		3) ԱՄԷ-ում ներդրումային համաժողովի նախապատրաստման և անցկացման ապահովում (**Մարտի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Ս.թ. մարտի 22-ին Աբու Դաբիում կայացել է հայ-էմիրաթական ներդրումային համաժողովը Նախագահ Սերժ Սարգսյանի և Աբու Դաբի էմիրության թագաժառանգ, ԱՄԷ զինված ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ Շեյխ Մոհամմեդ բին Զայեդ Ալ Նահյանի բարձր հովանավորությամբ: Համաժողովը կազմակերպվել է Հայաստանի զարգացման հիմնադրամի և Աբու Դաբիի Առևտրի պալատի կողմից՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի և արաբական երկրների տնտեսական կապերի ակտիվացմանը, գործարարների միջև շփումներին, ներկայացնելու Հայաստանի ներդրումային միջավայրը և տարբեր ոլորտներում փոխշահավետ ներդրումային նախագծերը: - Համաժողովի շուրջ 300 մասնակիցների թվում էին պետական պաշտոնյաներ, հիմնադրամների ղեկավարներ, վերազգային ընկերությունների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանում օտարերկրյա ներդրումների հաջող փորձ ունեցող ընկերությունների ներկայացուցիչներ: Հայկական կողմից մասնակցել է ավելի քան 120, իսկ էմիրաթական կողմից շուրջ 100 ընկերությունների ներկայացուցիչներ: - Համաժողովում ներկայացվել է Հայաստանի վերաբերյալ տեսաժապավեն և ՀՀ ներդրումային միջավայրի, գյուղատնտեսության, գյուղմթերքի վերամշակման, այլընտրանքային էներգետիկայի, անշարժ գույքի, ՏՏ, առողջապահության և դեղագործության, զբոսաշրջության, ենթակառուցվածքների ոլորտների, ինչպես նաև այդ ոլորտներում հաջողակ բիզնեսների վերաբերյալ շնորհանդեսներ: - Կայացել են գործարարների երկուստեք (B2B) հանդիպումներ գյուղատնտեսության և գյուղմթերքի վերամշակման, վերականգնվող էներգետիկայի, անշարժ գույքի և շինարարության, ՏՏ և ճշգրիտ ճարտարագիտության, առողջապահության և դեղագործության, զբոսաշրջության, ադամանդագործության և ոսկերչության, տեքստիլի, բանկային և խորհրդատվական, տրանսպորտի և լոգիստիկայի ոլորտները ներկայացնող ընկերությունների միջև:
		4) Օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացներում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ընդգրկում (**Հունվարի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - ՀՀ վարչապետի 2017թ. մարտի 17-ի N 268-Ա որոշմամբ արտաքին հարաբերությունների տնտեսական բաղադրիչն ընդլայնելու, օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների կողմից իրականացվելիք տնտեսական բնույթի աշխատանքների թիրախների և հայտանիշների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում է ՀՀ ՏԶՆ նախարարի առաջին

			տեղակալ Գ. Մելքոնյանը: Աշխատանքային խմբի շրջանակներում քննարկվել, մշակվել և ՀՀ կառավարութուն է ներկայացվել արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի զարգացման նպատակով երկրների թիրախավորման տնտեսական, չափանիշները, դիվանագիտական ներկայացուցչությունների տնտեսական գործունեության գնահատման չափանիշները, թիրախային երկրների մեկնարկային ցանկը, որը հաստատվել է 2017թ. օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի զարգացման նպատակով երկրների թիրախավորման տնտեսական չափանիշները, թիրախային երկրների ցանկը սահմանելու և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների տնտեսական գործունեության կատարողականի գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 924-Ա որոշմամբ: - Նախարարության տրամադրության տակ առկա ներդրումային ծրագրերի և ներդրումային միջավայրին առնչվող տեղեկատվական ողջ փաթեթը ներկայացվել է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին: Քննարկումներ են իրականացվում նաև ՀՀ ԱԳՆ հետ, վերջինս նախագծել է նաև համապատասխան հայեցակարգ: - 2017թ. առաջին եռամսյակում նախատեսվող օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված Հայաստանի դեսպանների և մշտական ներկայացուցիչների ամենամյա խորհրդակցության շրջանակներում քննարկելու նպատակով Նախարարության կողմից ՀՀ ԱԳՆ են ներկայացվել առաջարկություններ արտահանման և ներդրումների խրախուսման ուղղություններով: - Ներկայացվել են թիրախային շուկաները և այն ուղղությունները, որոնցում հատկապես կարևորվում է դիվանագիտական հատվածի աջակցությունն ու ներգրավվածությունը: Մասնավորապես, ներդրումների մասով՝ պոտենցիալ ներդրումների բացահայտում՝ նրանց հետ աշխատանքներում Նախարարության և ՀՁՀ հետ ակտիվ հաղորդակցության ապահովմամբ, ներդրումների խթանում՝ ապահովելով թիրախային երկրներում ներդրու-մային միջավայրի ու ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պատշաճ հոսքեր, ներդրումային օրենսդրության բարելավում՝ այդ նպատակով աջակցելով ՀՀ-ում օտարերկրյա կապիտալով գործող ընկերությունների գլխամասերի և/կամ ներդրում կա-տարելու մտադրություն ունեցող ընկերությունների հետ հանդիպումների կազմակերպման հարցում: - Հայաստանի և Չինաստանի միջև գործարար նախաձեռնությունների ակտիվացման և առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ձևավորվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդի հաստիքը և ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ կատարվել նշանակում: Հունիսի 13-ին Նինգբո քաղաքում տեղի է ունեցել Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի պաշտոնական

			ներկայացուցչության գրասենյակի բացումը:
		5) Ներդրումային ծրագրերին աջակցող պետական կամ պետության մասնակցությամբ կառույցների օպտիմալացման և գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում (**Մարտի** 1-**ին տասնօրյակ**)	**Կատարված է**: - ՀՀՀ Հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի հունիսի 13-ի թիվ 8-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀՀ՝ լավագույն միջազգային փորձին համահունչ կազմակերպչական կառուցվածքը, գործունեության հիմնական ուղղությունները: - 2017թ.-ի դեկտեմբերի 28-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հոգաբարձուների խորհրդի նիստում հավանությանն է արժանացել հիմնադրամի գործառույթների և կառուցվածքի օպտիմալացման մասին ներկայացված առաջարկությունների փաթեթը:
		6) Ներդրումային ծրագրերի փաթեթների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման և դրանց առաջմղման, «մեկ պատուհան» սկզբունքի ամբողջական կիրառմամբ՝ ներդրողների հետ աշխատանքի, ներդրումների ներգրավման և հետներդրումային սպասարկման ուղղությամբ Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունների ամրապնդում և զարգացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից նախագծվել և ներդրվել է ներդրումների խթանման և ներդրողների սպասարկման «մեկ պատուհան»-ի սկզբունքով գործող համակարգը՝ հիմնված ֆրանսիական «Բիզնես Ֆրանս», չեխական «Չեխինվեստ» և ֆիննական «Ֆինպրո» ներդրումների խթանման գործակալությունների փորձի վրա:
	54.	**ԳՈՐԾԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**	
		1) Պետական աջակցություն ՓՄՁ ԶԱԿ-ի հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման 2017 թվականի ծրագրի իրականացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատվել է ՀՀ ՏՀԶՆՆ նախարարի՝ 2017թ. փետրվարի 22-ի N 148-Ա հրամանով: Ծրագրի իրականացման համար 2017 թվականի պետական բյուջեից հատկացվել է նախատեսված ՀՀ 152.6 մլն ՀՀ դրամը: 2017 **թվականի ընթացքում՝** **Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից տրամադրվել է թվով** 11487 **աջակցություն հետևյալ ուղղություններով՝**

			✓ Սկսնակ գործարարների ձեռներեցությանը թվով 464 աջակցություն ✓ Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ թվով 246 ✓ Տեղեկատվական և խորհրդատվական թվով 10337 աջակցություն ✓ Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին թվով 81 վարկային երաշխավորությունների տրամադրում ✓ ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ՝ ՁԵՑ գործունեության շրջանակներում, թվով 348 ✓ Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում թվով 11 դրամաշնորհի տրամադրում ✓ Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում թվով 126 ՓՄՁ սուբյեկտների աջակցություն «**ՓՄՁ ներդրումներ**» **ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից՝** ✓ Տրամադրվել է թվով 67 վարկ (62 վարկառու), այդ թվում՝ վարկավորվել է թվով 46 իրավաբանական անձ և 16 անհատ ձեռնարկատեր: Վարկավորման ծավալը կազմել է շուրջ 2.80 մլրդ ՀՀ դրամ: ✓ Ձեռք է բերվել թվով 2 կոմբայն, թվով 38 տրակտոր և թվով 71 հարակից սարքավորումներ շուրջ 848 մլն ՀՀ դրամ գումարի չափով և ֆինանսական վարձակալությամբ է տրամադրվել թվով 24 ֆիզիկական անձի, թվով 3 գյուղական համայնքի և թվով 7 իրավաբանական անձի: Լիզինգի պայմանագրային գումարը կազմում է շուրջ 678.6 մլն ՀՀ դրամ:
		2) Գործարար համայնքի ներկայացուցիչների հետ առավել արդյունավետ համագործակցության ինստիտուցիոնալ հարթակի ձևավորում (**Փետրվարի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվել է գործարար համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակացույց ըստ առանձին ոլորտների: Ըստ անհրաժեշտության պարբերական հանդիպումներ են կայանում ոլորտային պատասխանատուների հետ: Գործարար համայնքի հետ հանդիպումները պարբերական բնույթ ունեն: Յուրաքանչյուր հաջորդ հանդիպման ընթացքում գործարար համայնքին ներկայացվում են նախորդ հանդիպումների ընթացքում հնչեցված հարցադրումների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկություններ: - Օժանդակություն է ցուցաբերվել պետական մարմինների հետ հարաբերություններում վարչարարական խնդիրների բախվող տնտեսավարողներին: - 24 ոլորտների շուրջ 300 արդյունաբերական ընկերությունների արտադրական և արտահանման ցուցանիշների վերաբերյալ ամսական մոնիտորինգի, ինչպես նաև՝ ոլորտային միությունների ու տարբեր ընկերությունների ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են առկա խնդիրները, քայլեր են ձեռնարկվել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես՝ արտահանմանը խոչընդոտող խնդիրների լուծման առաջարկները ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ:

			- Նախարարությունում գործում են գործարար միջավայրի, շուկայի վերահսկողության, զբոսաշրջության, որակի ենթակառուցվածքի և արտադրանքի լաբորատոր փորձարկումների թեժ գծեր:
		3) Ներդրումային ծրագրերի շրջանակներում ԱԱՀ-ի գումարների վճարման հետաձգման ընթացակարգի պարզեցում (**Հունվարի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Սահմանված ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել համապատասխան որոշման նախագիծ: Վերջինիս միջոցով նախատեսվում է էապես պարզեցնել այն չափորոշիչների ազդեցությունը, որոնք օգտագործվում են ներդրումային ծրագրերի սահմաններում ԱԱՀ հետաձգելու որոշումների կայացման ժամանակ: Ներդրումային ծրագրերի դեպքում ԱԱՀ հետաձգման արտոնությունները պետք է լինեն ավելի հասցեական՝ հիմքում ունենալով նոր աշխատատեղերի, արտադրության ծավալների ընդլայնման ավելի հստակ քանակային նպատակադրումներ: ՀՀ կառավարությունից նախագիծը վերադարձվել է հարկային և մաքսային մարմինների հետ լրացուցիչ քննարկելու նպատակով: Արդյունքում այն սկզբունքորեն փոփոխվել է: Լրամշակված նախագիծը 05.10.2017թ. հաստատվել է «Ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը սահմանելու և ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքների և մոնիթորինգի համակարգի մասին պայմանագրի ձևը հաստատելի մասին» ՀՀ կառավարության N1225-Ն որոշմամբ:
		4) Պետական աջակցություն՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: «Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագիրը» հաստատվել է ՀՀ ՏԶՆ նախարարի 2017 թվականի մայիսի 3-ի N 402-Ա հրամանով: **Հայաստանի զարգացման հիմնադրամի** (**ՀԶՀ**) **աջակցությամբ իրականացված աշխատանքների գծով՝** ✓ 23 ընկերություն մեկ միասնական տաղավարով փետրվարի 6-10-ը Մոսկվայում մասնակցել են «Պրոդ Էքսպո-2017» միջազգային ցուցահանդեսին՝ ներկայացնելով Հայաստանի սննդարդյունաբերության և խմբիչքների արտադրության ոլորտները: Հայկական ընկերություններն արժանացել են ավելի քան 25 մրցանակների տարբեր անվանակարգերում: ✓ Հայկական 5 ընկերություն փետրվարի 14-17-ը մասնակցել են Մոսկվայում անցկացված «ՏեքստիլԼեգՊրոմ» տեքստիլի և թեթև արդյունաբերության 48-րդ միջազգային տոնավաճառ-ցուցահանդեսին, որտեղ հայկական ընկերությունները ներկայացել են միասնական հայկական տաղավարով: ✓ Կոշիկի և կաշվե իրերի արտադրությամբ զբաղվող հայկական 10 ընկերություններ մարտի 14-17-ը մեկ միասնական տաղավարով Մոսկվայում մասնակցել են «MosShoes-2017» միջազգային ցուցահանդեսին: ✓ Ապրիլի 6-9-ը կազմակերպվել է հայկական վեց կազմակերպությունների մասնակցությունը

			Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում կայացած ամենամյա «ԱՌՈԽ» 28-րդ միջազգային մասնագիտացված ոսկերչական ցուցահանդեսին: ✓ Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը կազմակերպվել է հայկական 6 ընկերությունների մասնակցությունը՝ Մոսկվա քաղաքում կայացած «Текстильлегпром 2017» 48-րդ մեծածախ տոնավաճառ-ցուցահանդեսին: ✓ Սեպտեմբերի 5-8-ը կազմակերպվել է հայկական 8 ընկերությունների մասնակցությունը Մոսկվայում կայացած «Мосшуз» ցուցահանդեսին, որի ընթացքում իրականացվել են մի շարք հանդիպումներ հավանական գնորդների և ոլորտի ներկայացուցիչների հետ: ✓ Սեպտեմբերի 11-14-ը կազմակերպվել է հայկական 16 ընկերությունների մասնակցությունը Մոսկվայում կայացած «WorldFood Moscow 2017» սննդարդյունաբերության ոլորտի միջազգային ցուցահանդեսին մեկ միասնական «Հայկական» տաղավարով: «Հայկական» տաղավարն արժանացել է ցուցահանդեսի «Լավագույն տաղավար» մրցանակի: Հայկական ընկերությունները ցուցահանդեսի շրջանակներում արժանացել են մի շարք մրցանակների, մասնավորապես՝ «Տարվա ապրանքատեսակ»՝ սննդի և խմիչքների միջազգային մասնագիտացված համտես-մրցույթի արդյունքում «Դուստր Մարիաննա» ընկերությունն արժանացել է 1 բրոնզե, 1 արծաթե և 1 ոսկե մեդալների, իսկ «Սևանի իշխան» ընկերությունը՝ ոսկե մեդալի, «Ավելիաց» և «Երևանի գարեջուր» ընկերության ապրանքատեսակները հաջողությամբ անցել են որակի և անվտանգության վերահսկողության ստուգումը՝ արժանանալով բարձր՝ «A» կարգի: ✓ Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը տեղական 5 ընկերություն մասնակցել է Մոսկվայում ընթացող «JUNWEX Moscow» ոսկեգործական 12-րդ ցուցահանդեսին: Հայկական ընկերությունները ներկայացրել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով ոսկերչական արտադրանք, բնական քարեր, ժամացույցներ և անհատական պատվերներով պատրաստված արծաթյա զարդեր: ✓ Հոկտեմբերի 3-ին Ֆրանսիայի Փոքր ու միջին ձեռնարկությունների կոնֆեդերացիայի հետ համագործակցությամբ Երևանում կազմակերպվել է «Հայաստան-Ֆրանսիա» գործարար համաժողովը, որին մասնակցել են շուրջ 30 գործարար երկու երկրներից: Ներկայացվել է երկրի ներդրումային միջավայրը: Հիմնադրամի և կոնֆեդերացիայի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Համաժողովի շրջանակում կազմակերպվել են B2B հանդիպումներ, որոնց ընթացքում դեղագործական, ալկոհոլային խմիչքների, խորհրդատվական բիզնեսի, կառուցապատման, ճարտարապետա-շինարարական նախագծման, անշարժ գույքի, չրերի արտադրության, գյուղմթերքի վերամշակման ոլորտի ընկերությունները քննարկել են գործարար ծրագրեր և նոր կապեր են հաստատել: ✓ Հոկտեմբերի 4-ին Երևանում Չեխիայի դեսպանության հետ համագործակցությամբ կազմակերպել են «Հայաստան-Չեխիա» գործարար համաժողովը, որը տեղի է ունեցել Չեխիայի խորհրդարանի Սենատի նախագահ Միլան Շտեխի պաշտոնական այցի շրջանակում: Պատվիրակության կազմում Հայաստան են ժամանել Չեխիայի խոշոր

			ընկերությունների ներկայացուցիչներ: Հայաստանի զարգացման հիմնադրամը և Չեխիայի Արդյունաբերության կոնֆեդերացիան մեկ հարթակում հավաքված հայ և չեխ գործարարներին ներկայացրել են երկու երկրների ներդրումային և արտահանման հնարավորությունները, տնտեսությունների վերջին զարգացումները, գերակա ոլորտները: ✓ Նոյեմբերի 14-16-ը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ գինի, կոնյակ և այլ ալկոհոլային խմիչքներ արտադրող 13 ընկերություն առաջին անգամ Չինաստանի Շանհայ քաղաքում մասնակցել են «Prowine China 2017» ցուցահանդեսին: Հայաստանյան գինեգործությունը և կոնյակագործությունը ներկայացվում է միասնական տաղավարով: Ոլորտը կառավարության գերակայություններից է, ուստի արտահանման ներուժ ունեցող ընկերությունների մասնակցությունը համաֆինանսավորվել է պետական աջակցության շրջանակում: ✓ Նոյեմբերին Իրանի Արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆի այցի շրջանակում Հայաստանի զարգացման հիմնադրամը երկու երկրների ձեռներեցների և տնտեսական ոլորտի պաշտոնյաների մասնակցությամբ կազմակերպել է Հայ-իրանական գործարար համաժողով: Հարևան երկրների դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված համաժողովին մասնակցել են շուրջ 150 գործարարներ: Հարևան երկրից ժամանած ձեռներեցներին ներկայացվել են Հայաստանի գործարար հնարավորությունները, ազատ տնտեսական գոտիները, հարկային կարգավորումները, արտոնյալ առևտրային ռեժիմները: ✓ Դեկտեմբերի 12-15-ը Լիբանանյան գործընկերոջ՝ «Մենեջմենթ Միքս» ընկերության հետ համագործակցությամբ նախաձեռնել էր բիզնես առաքելություն դեպի Բեյրութ՝ Հայաստանի ներդրումային հնարավորությունների ներկայացման նպատակով, հիմնականում՝ SS, տեքստիլ (արտադրություն և դիզայն), ֆինանսական, բանկային, ապահովագրական, սննդարդյունաբերության ոլորտներով: Մասնակցել են հայաստանյան 13 և Լիբանանի խոշոր առևտրային ցանցերի, դիստրիբյուտորական ընկերությունների 35 ներկայացուցիչների, որոնց գործունեությունն ընդգրկում է Միջին Արևելքի և Աֆրիկյան մի շարք երկրների շուկաներ:
		5) Չաշխատող ակտիվների վերագործարկման վրա հիմնված գործարար ծրագրերի ձևավորման ուղղորդում (**Մարտի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - ՀՀ ՏԶՆՆ-ն ներկայացրել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի վարչության կողմից մշակված պետական սեփականությամբ անշարժ գույքի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ հայեցակարգի նախագծի առնչությամբ իր նկատառումներն ու առաջարկությունները: - ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության հետ քննարկումների արդյունքում ձևավորվել է ՀՀ պետական սեփականություն հանդիսացող և ներդրողների համար գրավիչ անշարժ գույքի ցանկ: - ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կառավարություն է ներկայացրել գույքահարկով հարկման բազան դրա շուկայական արժեքին մոտեցնելու հայեցակարգ, որի ընդունման

			և նոր համակարգի գործարկման արդյունքում գույքահարկը կհաշվարկվի շուկայական արժեքով: Այս մոտեցման արդյունքում խթաններ կստեղծվեն մասնավոր չաշխատող ձեռնարկատիրական ակտիվների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար: - ՀՀ կենտրոնական բանկը քննարկում է ֆինանսական հատվածում գրավադրված՝ մասնավոր չաշխատող ակտիվների օգտագործման արդյունավետությունը բաձրացնելու հնարավոր մեխանիզմները: - Խնդրո առարկային մասով ՀՀ ՏԶՆՆ իր իրավասությունների սահմաններում շարունակաբար համագործակցում է շահագրգիռ մարմինների հետ:
	55.	**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ ՀՀ ԴԻՐՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**	
		1) Գլոբալ մրցունակության ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի իրականացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Իրականացվում է ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Գլոբալ մրցունակության ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավման 2017-2018 թվականների միջոցառումների ծրագիրը: Ներառված 36 միջոցառումներից 13-ը նախատեսված էր և իրականացվել է 2017 թվականի ընթացքում:
		2) Համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելու ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի իրականացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 8-ի նիստի N 24 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թվականի միջոցառումների ծրագիրը: Համաձայն ընթացիկ մոնիթորինգի արդյունքների՝ նախատեսված 49 միջոցառումներից արդեն իսկ իրականացվել է 41-ը, մնացած 8-ը ընթացքի մեջ են, և նախատեսվում է դրանք ավարտին հասցնել ըստ սահմանված ժամանակացույցի: Հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 8-ի նիստի N 24 արձանագրային որոշման՝ պատասխանատու մարմինը Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թվականի միջոցառումների ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին ՀՀ ՏԶՆՆ-ին պետք է ներկայացնի տեղեկատվություն մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա ութերորդ աշխատանքային օրը՝ կատարված միջոցառումների քանակի վերաբերյալ առավել ճշգրիտ տեղեկատվություն հնարավոր կլինի տրամադրել ս.թ. հունվարի 15-ից հետո:
	56.	**ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ**	

		ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	
		1) Ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողների տվյալների բանկի ձևավորում՝ ներառելով առկա (այդ թվում՝ արտոնյալ առևտրային ռեժիմ ունեցող) և պոտենցիալ շուկաները, հնարավորությունները ու զարգացման ներուժը (**Մարտի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Ձևավորվել է մասնագիտացված արտահանող կառույցների տվյալների բազա՝ ներառյալ նրանց ուղղվածությունը, առկա և պոտենցիալ շուկաները, առկա լոգիստիկ հնարավորությունները: Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Տվյալների բազան նախարարության կողմից պարբերաբար թարմացվում է:
		2) Արտերկրում գործող առևտրային ցանցերում հայկական արտադրանքի դիրքավորման հնարավորությունների և առկա խնդիրների բացահայտում (**Մարտի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Վերլուծության (ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ) արդյունքում հստակեցվել է, որ առանձնացված ապրանքային խմբերի համար հրամայական է արտահանող/լոգիստիկ կազմակերպությունների ձևավորումը, որոնք իրենց շուրջ կհամախմբեն փոքր ու միջին կազմակերպություններն և կձևավորեն մեկ հովանոցային բրենդ: Մասնավորապես, օրակարգում է գյուղատնտեսական և պատրաստի սննդամթերքի ոլորտներում նման ընկերությունների ձևավորման և դրանց զարգացման հիմնահարցը: - METRO AG ընկերության հետ բանակցություններ են վարվել «Սևանի Իշխան», «Մխչյան Ֆիշ», «Դուստր Մարիաննա» և այլ ընկերությունների հետ հայկական արտադրանքի արտահանման ուղղությամբ: Ապրիլի 5-ի դրությամբ՝ պայմանագիր է կնքվել «Սևանի Իշխան» ընկերության հետ: Պանիրի մասով ընկերությունները բանակցություններ են վարում նաև ռուսական «Լենտա» և x5 առևտրային ցանցերի հետ հայկական պանիրների արտահանման ուղղությամբ: - Սանկտ Պետերբուրգի ադմինիստրացիայի հետ արտահանման և ներկրման համատեղ ընկերություն հիմնելու ուղղությամբ նախարարության կողմից մշակվել և Սանկտ-Պետերբուրգի գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ վաճառքի և իրացման «Ագրոպոլիս» կենտրոնի գլխավոր տնօրինությանն է ներկայացվել արտահանում և ներմուծում իրականացնող համատեղ կազմակերպություն հիմնելու ծրագրի վերաբերյալ առաջարկություններ: Նշվածի ուղղությամբ տեղի են ունեցել մի շարք աշխատանքային հանդիպումներ: Համատեղ ընկերություն հիմնումն ու լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը կարող է հիմք հանդիսանալ ոչ միայն հայկական արտադրանքի արտահանման, այլև հետագայում հայ-ռուսական լոգիստիկ հանգույց ստեղծելու համար, որի գործունեության հիմնական նպատակը կլինի հայկական ապրանքների բաշխումը և մատակարարումը Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզեր, մասնավորապես՝ Հյուսիս-արևմտյան և Պրիվոլժյան մարզերի ագրոլոգիստիկ շղթայում: Նշված

			գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ վաճառքի և իրացման «Ագրոպոլիս» կենտրոնին առաջարկվել է նաև ստեղծել միջնորդ օղակ հանդիսացող կառույց, որը կամրապնդի տնտեսվարող սուբյեկտների և մասնագիտացված արտահանող կառույցների միջև կապը՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում: - ՌԴ-ում արտադրվող և արտահանվող ապրանքների կառուցվածքը, վերոնշյալ ապրանքները ՀՀ-ում արտադրելու հնարավորությունների և ներուժի ուսումնասիրության նպատակով կազմակերպվել է աշխատանքային հանդիպում ՌԴ Վոլոգդայի մարզի ղեկավարության հետ, որի ժամանակ քննարկվել են կողմերի համար արտահանման ուղղվածություն ունեցող ապրանքատեսակների ցանկերը, ինչպես նաև համագործակցության հետագա մեխանիզմները:
		3) Մասնագիտացված արտահող կառույցների (այդ թվում՝ լոգիստիկ ընկերությունների) ձևավորմանն ուղղված աջակցության մեխանիզմների վերաբերյալ առաջարկութ-յունների ներկայացում (**Ապրիլի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Հանդիպումներ են կազմակերպվել մասնագիտացված արտահանող կառույցների և լոգիստիկ ընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել և ներկայացվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ բեռնափոխադրման ժամանակ գանձվող ճանապարհային վճարների և մաքսավճարների դրույքաչափերի վերանայման, տարանցիկ փոխադրումների ընթացակարգերի պարզեցման, պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդման նպատակով արտերկրում առևտրային ներկայացուցչություններ հիմնելու հնարավորության, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաներ մուտք գործելու հետ կապված: Իրականացվել են նաև մի շարք ապրանքային շուկաների վերլուծություններ: - Աշխատանքներ են ընթացել առանձնացված ապրանքային խմբերի համար արտահանող/լոգիստիկ կազմակերպությունների ձևավորման և դրանց շուրջ փոքր ու միջին կազմակերպությունների համախմբման ուղղությամբ, որոնք հարևան շուկաների մեծածավալ ցանցերին մեկ հովանոցային բրենդի տակ կապահովեն բավարար քանակության արտադրանքի ծավալ և համապատասխան որակ: Մասնավորապես՝ օրակարգում է կոնյակի, չրի, պանրի, ձկնային արտադրանքի, շինանյութերի արտահանման մասնագիտացված ընկերությունների ձևավորման բիզնես պլանների կազմումն ու ներդրողների ներգրավումը: - Հայրենական արտադրանքը (բրենդը) արտերկրում գործող առևտրային ցանցերում ներկայացնելու նպատակով քննարկվում է որպես կիրառական մոդել դիտարկել ICE HOUSE ընկերությունը, որի հետ գործողության մեխանիզմը և պետության աջակցության գործիքակազմը ներկայումս գտնվում է մշակման փուլում: Հիմնական ուղղվածությունն է գյուղմթերքի և պահածոների արտահանումը:
	57.	**ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻՉ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**	

		1) Մի շարք նպատակային շուկա հանդիսացող երկրների համար Հայաստան առանց արտոնագրի մուտքի ռեժիմի սահմանում կամ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացում, ինչպես նաև զբոսաշրջային տրանսպորտային միջոցների համար սահմանային անցման դյուրացում (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ)**	**Կատարված է**: Զբոսաշրջային առավել մեծ ներհոսք ապահովելու նպատակով իրականացվել է թիրախային շուկաների ուսումնասիրություն: ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ սահմանային անցման գործընթացի դյուրացմանն ուղղված մի շարք առաջարկներ են ներկայացվել: Մինչ այսօր սահմանային անցման գործընթացը դյուրացվել է Չինաստանի, ԱՄԷ, Քաթարի, Ճապոնիայի, Հնդկաստանի և ՌԴ քաղաքացիների համար:
		2) Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների (այդ թվում՝ ամենամյա ավանդական փառատոններ, տոնակատարություններ) իրականացում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: ՀՀ ՏԶՆ նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի 30.01.2017թ. N 56-Ա հրամանով հաստատված Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ 1-ին եռամսյակում՝ ✓ հունվարի 20-27-ին կայացել է հայկական զբոսաշրջային օպերատորների և մասնագիտացված լրագրողների պատվիրակության ճանաչողական այցը Իրանի Իսլամական Հանրապետությունում, որը կազմակերպվել է «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության կազմակերպության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի շրջանակներում և ուղղված է եղել երկու երկրների միջև զբոսաշրջային այցելությունների կայուն աճի ապահովմանը, Հայաստան-Իրան տարածաշրջանային միասնական զբոսաշրջային արդյունքի ձևավորմանը և միջազգային շուկայում պատշաճ ներկայացմանը: Այցի ընթացքում իրանական կողմի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն. – իրանական զբոսաշրջային մասնագիտացված լրագրողների Հայաստան ճանաչողական այցի կազմակերպման վերաբերյալ, – փետրվարի 6-9-ը Թեհրանում կայացած «Tehran International Tourism Exhibition» 10-րդ զբոսաշրջային ցուցահանդեսին և ապրիլի 21-23-ը Երևանում կայանալիք «In Tour Expo 2017» 4-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին փոխադարձ մասնակցության ապահովման վերաբերյալ: ✓ փետրվարի 6-9-ը կայացել է «Tehran International Tourism Exhibition» զբոսաշրջության 10-րդ միջազգային ցուցահանդեսը, որին Հայաստանը առաջին անգամ ներկայացել է միասնական տաղավարով՝ 6 հայկական զբոսաշրջային օպերատորների

			մասնակցությամբ: ✓ մարտի 7-10-ը Գերմանիայի Բեռլին քաղաքում հայկական պատվիրակությունը, տեղական 14 օպերատորների մասնակցությամբ ներկայացրել է Հայաստանը «ITB Berlin» ցուցահանդեսին, որի շրջանակներում Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահը մասնակցել է Մետաքսի ճանապարհի երկրների նախարարական 7-րդ հանդիպմանը և Մետաքսի ճանապարհի զբոսաշրջային օպերատորների 6-րդ ֆորումին: Միջոցառման ընթացքում նաև տեղի են ունեցել հանդիպումներ ՄԱԿ ԶՀԿ «Մետաքսի ճանապարհ» ծրագրի ղեկավարի, “Messe Berlin” ընկերության ղեկավարի, Իտալիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարության միջազգային կապերի պատասխանատուի, Զբոսավարների ասոցիացիայի համաշխարհային ֆեդերացիայի (WFTGA) Մետաքսի ճանապարհի ներկայացուցչի, Բրիտանական “BBC” հեռուստաընկերության Հայաստանի և մի շարք այլ երկրների գրասենյակների ղեկավարի, “Euronews” հեռուստաընկերության միջազգային կապերի տնօրենի, Գերմանիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանի հետ: Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ “BBC” և “Euronews” հեռուստաընկերությունների կողմից Հայաստանի զբոսաշրջային ներուժի վերաբերյալ տեղեկատվության հեռարձակման վերաբերյալ: ✓ մարտի 29-ից ապրիլի 1-ը Իսպանիայի Թագավորության Վելենսիա քաղաքում ապահովվել է մասնակցությունը Մետաքսի ճանապարհի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ աշխատանքային խմբի հանդիպմանը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի նախաձեռնությամբ ՄԱԿ ԶՀԿ և ՍԾՏՀ հովանու ներքո Վրաստանի, Բուլղարիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների մասնակցությամբ մշակել «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի ռազմավարությունը և մարքեթինգային քաղաքականությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ՄԱԿ ԶՀԿ և “tripadvisor” ճամփորդությունների վերաբերյալ համաշխարհային կայքի և մի շարք այլ հարթակներ օգտագործել Հայաստանում անցկացվելիք ոլորտի միջոցառումները լուսաբանելու համար: ✓ մարտի 29-ից ապրիլի 1-ը Մոսկվա քաղաքում Մոսկվայի Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի (ВДНХ) հայկական տաղավարի տարածքում կազմակերպվել է հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող շնորհանդես (Road Show): ✓ մարտին կազմակերպվել է «Ավտոպլյուս» հեռուստաալիքի ներկայացուցիչների ճանաչողական այցը Հայաստան: Այցի արդյունքում նկարահանված տեսանյութը կներկայացվի ռուսաստանյան լսարանին: ✓ մայիսի 5-6-ը կայացել է «Երևանյան գինու օրեր» փառատոնը, որին մասնակցել են ավելի քան 250000 այցելու, ✓ մայիսի 7-ին ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում անցկացվել է «Կոնյակ»-ի փառատոնը՝ ապահովելով մոտավորապես 15,000 այցելու:

			✓ մայիսի 10-13-ն ապահովվել է հայկական պատվիրակության մասնակցությունը Մադրիդ քաղաքում (Իսպանիայի Թագավորություն) կայացած ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿԶՀԿ) Գործադիր խորհրդի (ԳԽ) 105-րդ նստաշրջանին, որտեղ կայացել է ՄԱԿԶՀԿ Գլխավոր քարտուղարի թեկնածուի ընտրություն, որը կներկայացվի ՄԱԿԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի հաստատմանը: Հայկական պատվիրակության հրավերով պայմանավորվածություն է ձեռքբերվել ՄԱԿԶՀԿ նորընտիր Գլխավոր քարտուղարի թեկնածուի հետ Հայաստան այցելելու և հետագա համագործակցությունը քննարկելու վերաբերյալ: ✓ մայիսի 26-30-ը Հայաստանում ճանաչողական այցով էին գտնվում Հնդկաստանից ժամանած հնդկական Travel & Leasure հայտնի զբոսաշրջային ամսագրի գլխավոր խմբագիրը և մի շարք հայտնի ամսագրերի համախմբագրերը, որոնք այցելել են Հայաստանի զբոսաշրջային գրավչության և ժամանցի մի շարք վայրեր, ծանոթացել տեղի մշակույթին՝ հարցազրույցներ վերցնելով հայ գիտնականներից և արհեստավորներից, ✓ մայիսի 29-31-ը ուկրաինական ՄԱՄ ավիաընկերության հետ համագործակցության արդյունքում Հայաստան են այցելել ուկրաինական Լվով քաղաքի խոշոր զբոսաշրջային օպերատորներ, լրագրողներ և զբոսաշրջության պետական կառավարման ոլորտի պաշտոնատար անձիք՝ թվով 14 հոգի: Համագործակցության պայմանագրեր են կնքվել 2 կողմերի զբոսաշրջային օպերատորների միջև, իսկ նախնական պայմանավորվածության համաձայն ՄԱՄ ավիաընկերությունը նախատեսում է բացել Լվով-Երևան ուղիղ չվերթ, ✓ մայիսի 31-ից հունիսի 3-ը ճանաչողական այցով Հայաստան են ժամանել Ֆիլիպինների Travel Now ամսագրի և TV/On Line Series հեռուստաընկերության 5 լրագրողներից բաղկացած նկարահանող խումբը, որոնք Մանիլա-Մոսկվա նոր ուղիղ չվերթի մեկնարկի հետ Աերոֆլոտ ավիաընկերության Մանիլայի գրասենյակի հետ համատեղ պատրաստելու են գովազդային արշավ Ֆիլիպիններում առաջարկելով Մանիլա-Մոսկվա-Երևան զբոսաշրջային ուղղություն, ✓ հունիսի 1-4-ը Արմենիա ավիաընկերության հետ համագործակցության արդյունքում Հայաստանում են գտնվել Իսրայելից ժամանած թվով 17 զբոսաշրջային օպերատորներ: Կազմակերպվել է բիզնեսֆորում 2 կողմերի զբոսաշրջային օպերատորների համար: ✓ հունիսի 7-ին տեղի է ունեցել հանդիպում արկածային տուրերի կազմակերպիչների հետ: Հավաքագրվում է Հայաստանի տարածքում գործող և նախատեսվող արկածային զբոսաշրջային երթուղիների և դրանց հարող տարածաշրջանների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիման վրա կստեղծվի արկածային զբոսաշրջային երթուղիների բազա: ✓ հունիսի 10-17-ը Հայաստանում է գտնվել ամերիկացի հայտնի գրող, գաստրոնոմ, «Eat My Globe» Նյու-Յորքյան բեստսելլեր գրքի հեղինակ, Food Network հեռուսատալիքի «Iron Chef America» ռեալիթի շոուի ժյուրիի անդամ Սիմոն Մաջումդարը: Նա իր այցի մասին պարբերաբար հրապարակումներ է անում սոցիալական կայքերում, որտեղ ունի ավելի քան 30000 հետևորդ: Այցից հետո նախատեսվում է համաձայնություն ձեռք բերել

			և Հայաստանում նկարահանել գաստրոզբոսաշրջության վերաբերյալ հաղորդաշար, ✓ հունիսի 11-17-ը Հայաստանում է գտնվել Կորեայի պետական «EBS» հեռուստաընկերության World Team Travel հաղորդման նկարահանող խումբը, որը պատրաստելու է 70 րոպե տևողությամբ 2 հաղորդաշար Հայաստանի էկո և ագրոզբոսաշրջության մասին, ✓ հուլիսի 1-ին ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում կայացել է «Սյունյաց ավանդույթներ» փառատոնը «Թութ» խորագրով: ✓ հուլիսի 22-ից 24-ը ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեն «Բացահայտիր քեզ համար քո երկիրը» արշավի շրջանակներում Արցախի էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ կազմակերպվել է հայաստանյան մի շարք ԶԼՄ-ների ներկայացուցիչների ճանաչողական այցն Արցախ: ✓ հուլիսի 21-ին տեղի է ունեցել «Fun Armenia» խորագրով արշավի մեկնարկը: Լուսանկարների մրցույթին մասնակցել են թե՛ քաղաքացիներ և թե՛ զբոսաշրջիկներ՝ լուսանկարելով Հայաստանը յուրովի և նորովի գնահատելով Հայաստանի եզակիությունն ու ողջ հմայքը: ✓ օգոստոսի 20-ին պետական աջակցությամբ ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում կայացել է «Ավանդական ուտեստների մրցույթ փառատոնը»: ✓ օգոստոսի 26-ին ՀՀ Տավուշի մարզի Զորական (Զադախլու) համայնքել է «1000 տարվա գյուղամեջ» փառատոնը: ✓ սեպտեմբերի 9-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում իրականացվել է պատմամշակութային վերածննդին նպաստող փառատոնը: ✓ սեպտեմբերի 30-ին ՀՀ վայոց Ձորի մաչզի Խաչիկ համայնքում իրականացվել է «Գյուղական ավանդույթներ» «Գաթա» փառատոնը: ✓ ОРТ հեռուստաընկերության հետ՝ «НЕПУТЕВЫЕ ЗАМЕТКИ» հաղորդաշարի կազմակերպում՝ ապահովելով հասանելիություն 700,000 բաժանորդի համար: ✓ սեպտեմբերի 19-24-ը Հայաստանում ֆոտոտուրով գտնվել է National Geographic Россия-ի լրագրողների 14 հոգուց բաղկացած խումբը, որոնք ֆոտոարշավ են անցկացրել Հայաստանում: Այցի արդյունքում նախատեսվում է Հայաստանի մասին հոդվածների և նկարների հրապարակում: ✓ սեպտեմբերի 20-23-ը Հայաստան են այցելել Ղազախստանի հայտնի գաստրո բլոգերներ, որոնք այցելել են Հայաստանի մի շարք ռեստորաններ, հյուրընկալվել հայկական ավանդական ընտանիքներում, փորձել հայկական ավանդական կերակրատեսակներ, մասնակցել #YerevanFoodFest-ի շրջանակներում կազմակերպվող հայտնի խոսնակների բաց դասընթացներին և հայ խորհարարների վարպետության դասերին: Այցի արդյունքում նախատեսվում է հոդվածների հրապարակում: ✓ սեպտեմբերի 11-16-ը Չինաստանի Չենգդու քաղաքում հայկական պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի 22-րդ նստաշրջանին: ✓ Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է նաև «Զբոսաշրջության էթիկայի մասին»

			կոնվենցիայի նախագծի քննարկման աշխատանքներին: ✓ Մշակվել և ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ներկայացվել ՀՀ կառավարության և Մեքսիկական Միացյալ նահանգների կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման Հուշագրի նախագիծը: ✓ Աջակցություն է ցուցաբերվել Արենի գինու փառատոնի կազմակերպմանը (2017թ. հոկտեմբեր): ✓ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում օտարերկրյա լրագրողների համար կազմակերպվել են ճանաչողական այցեր դեպի Հայաստան: Հայաստան է այցելել շուրջ 40 լրագրող Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Իրանից, Չինաստանից և Լիբանանից: Նրանց շարքերում են այնպիսի հայտնի լրատվամիջոցներ, ինչպիսիք են՝ CNN - Anthony Burdain, Ամերիկյան և Հնդկական TRAVEL & Leasure, Россия24 և այլն: Ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանի մասին հրապարակվել են 20-ից ավել հոդվածներ, պատրաստվել են մի շարք հեռուստաֆիլմեր և հաղորդումներ՝ ապահովելով բազմամիլիոնանոց լսարանի հասանելիություն: ✓ Լիբանանյան Lighthouse ընկերության միջոցով նկարահանվում է «Հայաստանը՝ որպես առաջին քրիստոնյա երկիր» ֆիլմը: ✓ «Շարմ հոլդինգ»-ի կողմից ներկայացվել է Հայաստանի տեսարժան վայրերը և զբոսաշրջային ներուժը ներկայացնող «Visit Armenia» խորագրով տեսահոլովակը: ✓ Մեկնարկել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը: Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվում է Facebook, Instagram, VK, Telegram, Twitter, Google Plus սոցիալական ցանցերի հարթակներում. հասանելիությունը՝ 450,000 օգտատեր մեկ ամսում: Google որոնողական համակարգերում գովազդային արշավի և օպտիմիզացման ռազմավարության արդյունքում նկատվում է www.armenia.travel կայք այցելուների կտրուկ աճ: ✓ Հայկական կողմի նախաձեռնությամբ UNWTO և BSEC հետ համատեղ Մետաքսի ճանապարհի շրջանակներում մշակվել և Բուլղարիայում կայացած Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) անդամ պետությունների զբոսաշրջության հարցերով աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը ներկայացվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի ռազմավարությունը և մարքեթինգային քաղաքականությունը: ✓ ՀՀ ԶՊԿ և ՀԶՀ աջակցությամբ Հայաստանի մարզերում գործում են 5 տեղեկատվական կենտրոններ: ✓ հոկտեմբերի 18-ին Գյումրիում բացվեց զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն: ✓ դեկտեմբերի 15-ին բացվեց տեղեկատվական կենտրոն Մեղրիի ազատ տնտեսական գոտում: ✓ Ապահովվել է մասնակցություն 2017թ. նոյեմբերի 7-ին ԱՄԷ-ում (ք. Դուբայ) կայացած VFS GLobal ընկերության կողմից կազմակերպված iConnect ամենամյա սեմինարին, որը

			հարթակ է տրամադրում օտարերկրյա կառավարությունների ներկայացուցիչներին՝ արտոնագրային ծառայությունների, միգրացիայի կառավարման, հանրային ծառայությունների ոլորտներում վերջին տարիների միտումները, պահանջները, հաջորդ սերնդի լուծումները քննարկելու համար: Սեմինարի ընթացքում առաջնահերթ թեմաների շարքում է եղել թվային փոխակերպումը՝ կապված հանրային ծառայությունների ոլորտում թվային միջավայրի աճող դերակատարության հետ: ✓ նոյեմբերի 29-ից 30-ը Բելգիայում կայացել է ՄԱԿ ԶՀԿ «Measuring the Economic Impact of Tourism in Europe: the Tourism Satellite Account (TSA)» թեմայով սեմինար-քննարկումը, որին նպատակն էր Սատելիտային հաշիվ համակարգի ներդրմանն ուղղված այլ երկրների փորձի փոխանակումը, ինչպես նաև համակարգի կազմման մեխանիզմների քննարկումը (ներառյալ հիմնական պահանջները և հաշվապահական հաշվառման վարման եղանակները): ✓ Մշակվել է ՀՀ և ՉԺՀ միջև համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը՝ հաշվի առնելով Հայաստան-Վրաստան-Իրան տարածաշրջանային զբոսաշրջային հնարավորությունները և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն: ✓ Մշակման փուլում են - ՀՀ և Չեխիայի միջև զբոսաշրջության ոլորտում համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը: - ՀՀ և Սլովակիայի միջև զբոսաշրջության բնագավառում համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը: - ՀՀ և Տաջիկստանի միջև զբոսաշրջության ոլորտում համագործակցության համաձայնագրի նախագիծը:
		3) Թիրախային միջազգային մարզական մրցաշարերի ցանկի ձևավորում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - Բանակցային գործընթաց է սկսվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ ՀՀ-ում միջազգային մրցաշարերի կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ձևավորելու, դրանք մասնավոր հատվածի հետ համատեղ քննարկելու, համապատասխան ընտրություն կատարելու և աշխատանքների համատեղ կազմակերպման համար: - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ ՏՀՆՆ կարծիքի է ներկայացվել «Սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:
	58.	**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ**	
		1) Եվրոպական միության «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ապրանքների	**Կատարված է**: Հստակեցվել և ամրագրվել են ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգ» (REX) ինքնահավաստագրման էլեկտրոնային

		ծագման ինքնահավաստագրման էլեկտրոնային համակարգի ներդնում (**Դեկտեմբերի** 1-**ին տասնօրյակ**)	համակարգի շրջանակներում գրանցում և վարչական համագործակցություն իրականացնող պատասխանատու մարմինները՝ ապահովելով համակարգի ներդրման գործընթացը: Ամփոփվում է REX-ի կիրարկման իրավական շրջանակը՝ համակարգի մեկնարկն իրականացնելու նպատակով:
		2) Վիետնամական կողմին ՀՀ-ին միակողմանի արտոնությունների տրամադրման մասին առաջարկության ներկայացում (հայկական կոնյակի մասով) (**Սեպտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Համաձայն 2017 թվականի հունիսի 29-ին ք. Մոսկվայում կայացած՝ «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի դրույթների կատարման նպատակով ստեղծված Համատեղ Կոմիտեի նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ հայկական կողմը գրավոր դիմել է վիետնամական կողմին հետևյալ առաջարկով. Հաշվի առնելով, որ ՀՀ-ը չի մասնակցել Համաձայնագրի շուրջ ընթացող բանակցային գործընթացներին, սակայն հետագայում 2015 թվականի հունվարի 2-ից, հանդիսանալով ԵԱՏՄ անդամ պետություն, ստորագրել և վավերացրել է վերոհիշյալ Համաձայնագիրը, ինչպես նաև այն, որ Հայաստանի համար արտահանման հետաքրքրություն ներկայացնող ոչ մի ապրանք չի ներառվել Համաձայնագրին կից հավելվածում ներկայացված այն ապրանքների ցանկերում, որոնց հանդեպ վիետնամական կողմից տրամադրվում են սակագնային արտոնություններ, հայկական կողմը վիետնամական կողմի հետ հետագայում բանակցություններ է վարել երեք ապրանքատեսակների՝ կոնյակի, բրենդիի և փրփրուն գինիների մասով լրացուցիչ սակագնային արտոնություններ ստանալու ուղղությամբ, փոխարենը վիետնամական կողմին առաջարկվել է մաքսատուրքի դրույքաչափի մասնակի իջեցում պահածոյացված մանրավարունգի մասով: Հաշվի առնելով, որ առաջարկվող փոխզիջումները եղել են անհավասակշռված, մասնավորապես՝ 183.3 հազ ԱՄՆ դոլարի չափով կոնյակի, բրենդիի և փրփրուն գինիների արտահանման դիմաց վիետնամական կողմը պահանջել է 4889.4 հազ ԱՄՆ դոլարի չափով պահածոյացված մանրավարունգի մաքսատուրքի դրույքաչափի մասնակի իջեցում, կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք չի բերվել: Հաշվի առնելով, որ ՀՀ-ի և Վիետնամի միջև առևտուրը կրում է միակողմանի բնույթ, մասնավորապես՝ 2016 թվականին Հայաստանից Վիետնամ արտահանման ծավալը կազմել է 22.4 հազ. ԱՄՆ դոլար, իսկ Վիետնամից Հայաստան ներմուծման ծավալը՝ 22895.8 հազ. ԱՄՆ դոլար, վիետնամական կողմից հայկական կոնյակի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի մասով 75% միակողմանի արտոնությունների սահմանումը կարող է լուրջ խթան հանդիսանալ երկու երկրների համագործակցության ընդլայնման համար: Վերոհիշյալի մասով համաձայնության դեպքում հայկական կոնյակի՝ վիետնամական շուկա մուտք գործելու ժամանակ արտոնյալ մաքսատուրքի դրույքաչափի կիրառումը կարող է ամրագրվել առանձին երկկողմ արձանագրությամբ:
		3) ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի	**Կատարված է**: Ավարտվել է «ԵԱՏՄ անդամ երկրների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև

		շուրջ բանակցությունների անցկացում (**Սեպտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	ազատ առևտրի մասին» համաձայնագրի շուրջ վերջնական բանակցային փուլը: Համաձայնագրին կից ցանկերի մասով կողմերի միջև ձեռք է բերվել վերջնական համաձայնություն: Ներկայումս Համաձայնագրի տեքստը թարգմանվել և վերոնշյալ ցանկերի հետ միասին ներկայացվել է ԵԱՏՄ անդամ պետությունների ներպետական համաձայնեցմանը:
		4) ԵԱՏՄ-Չինաստան առևտրա-տնտեսական համագործակ-ցության մասին համաձայնագրի շուրջ բանակցություններին մասնակցություն (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Ավարտվել է «ԵԱՏՄ անդամ պետությունների և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համա-գործակցության մասին» համաձայնագրի վերջնական բանակցային փուլը: Համաձայնագրի տեքստը թարգմանվել և համապատասխան ցանկերի հետ միասին ներկայացվել է ԵԱՏՄ անդամ պետությունների ներպետական համաձայնեցմանը:
		5) Ծոցի երկրների հետ ՀՀ-ին միակողմանի արտոնությունների տրամադրման մասին առաջարկությունների ներկայացում (**Նոյեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Պարսից ծոցի երկրների կողմից ՀՀ-ին միակողմանի արտոնությունների ձեռքբերման նպատակով իրականացվել են վերլուծություններ, առանձնացվել են յուրաքանչյուր երկրի կողմից ներմուծվող այն ապրանքները, որոնց վերաբերյալ հայկական կողմը ներկայացրել է առաջարկություններ արտոնությունների տրամադրման մասով:
		6) Հայ-իրանական համագործակցության ներքո տեղական արտահանող ու իրա-նական ներմուծող ընկերու-թյունների համագործակ-ցության մտադրության ամրագրում (**Դեկտեմբերի** 1-**ին տասնօրյակ**)	**Կատարված է**: 2017 թվականի դեկտեմբեր ամսին տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ ԿԱ ՊԵԿ ղեկավարության և ԻԻՀ պատվիրակության միջև, որի ընթացքում քննարկվել են հայ-իրանական արտահանող և ներմուծող համատեղ ընկերության ստեղծման և հետագա գործունեության մեխանիզմները:
	59.	**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**	
		1) Ադամանդի հումքի աղբյուրների դիվերսիֆիկացում և առկա աղբյուրներից հումքի ձեռքբերման առավել արդյունավետ պայմանների ամրագրում (**Դեկտեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Ռուսաստանի Դաշնությունից ալմաստի հումքի մատակարարումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանդիպում է կազմակերպվել ՌԴ պետական գանձարանի (Գոխրան) ղեկավար պրն Ա. Յուրինի և ԱԼՌՈՍԱ ընկերության նախագահ պրն Ս. Իվանովի հետ: Ձեռք են բերվել հստակ և վերջնական պայմանավորվածություններ:
		2) ՌԴ շուկայում հայկական ծագման ապրանքների վաճառքի էլեկտրոնային հարթակի ներդրման աջակցություն	**Կատարված է**: Ռուսաստանի Դաշնության շուկայում հայկական ծագման ապրանքների վաճառքի Armzone էլեկտրոնային հարթակը արդեն իսկ ներդրվել է «Սպայկա» ընկերության կողմից և ներկայունս շահագործվում է:

		(**Սեպտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	
		3) Ծագման երկրի հավաստագրերի՝ էլեկտրոնային եղանակով տրամադրում և երկակի նշանակության ապրանքների արտահանման ընթացակարգերի պարզեցման առաջարկություն-ների ներկայացում (**Դեկտեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: - 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1772-Ն որոշման մեջ փոփոխություն է կատարվել, համաձայն որի նույն խմբաքանակի ապրանքների համար կգործի մշտական անվանացանկ: Մշտական անվանացանկի համար փորձաքննություն է իրականացվում մեկ անգամ և անժամկետ: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը կազմակերպել են մի շարք հանդիպումներ, սեմինար-քննարկումներ բիզնեսի ներկայացուցիչների հետ և ներկայացվել է մշտական անվանացանկից օգտվելու ընթացակարգը: - Աշխատանքներ են իրականացվում էլեկտրոնային սերտիֆիկացման համակարգի ներդնելու ուղղությամբ, մասնավորապես՝ ներկայումս քննարկվում և մշակվում է ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համատեղ էլեկտրոնային սերտիֆիկացման համակարգի անցնելու մեխանիզմը: - ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ քննարկվում է էլեկտրոնային համակարգը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի «Մեկ պա-տուհան» համակարգին միացնելու ուղղությամբ: Մշակվել է նախկինում փորձա-քննություն անցած ապրանքատեսակների շտեմարան: Շտեմարանը հնարավորություն է տալիս կայքում գրանցված տնտեսվարողներին գտնել իրենց կողմից ներմուծվող և արտահանվող ապրանքները ցանկում և չանցնել կրկնակի փորձաքննություն: - Երկակի նշանակության ապրանքների արտահանման ընթացակարգերի պարզեցման նպատակով շահագրգիռ մարմինների և մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում՝ մշակվել է ճանապարհային քարտեզ, որը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի օգոստոսի 17-ի N01/16.2/8417-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:
		4) Արտահանման 5 թիրախային շուկաների մասով ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հասանե-լիության ապահովում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Նախնական վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքներով ընտրվել են 5 թիրախային շուկաներ, մշակվել են արտահանողների համար անհրաժեշտ տեղեկատ-վական փաթեթները և ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը: Ներկայումս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք-էջում տեղադրված են 5 թիրախային շուկաների, մասնավորապես՝ Արաբական Միացյալ Էմիրությունների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Իրանի Իսլամական Հանրապետության և Կատարի մասով ներմուծման ընթացակարգերի ամփոփ տեղեկագրերը:
		5) Ցուցահանդեսներին և տոնավա-ճառներին մասնակցության աջակցման առավել արդյունավետ	**Կատարված է**: ՀՀ ՏՋՆՆ կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ

		մոտեցումների վերաբերյալ առաջարկությունների մշակում (**Դեկտեմբերի** 3-**րդ տասնօրյակ**)	նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության 2018 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանի նախագիծ: Նշված ծրագրի հաստատումից հետ ՀՁՀ-ի կողմից կմշակվի և Հոգաբարձուների խորհուրդի հաստատմանը կներկայացվի Ցուցահանդեսների մասնակցության կարգը, որտեղ ներառված կլինեն նաև ցուցահանդեսներին մասնակցության աջակցման առավել արդյունավետ մոտեցումներ:
	60.	**ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐՈՒՄ**	
		Մանածագործության, հագուստի արտադրության, կոշիկի արտադրության ոլորտներում ըստ գործունեության վայրերի աշխատատեղերի ստեղծումը խթանող արտոնություններ նախատեսելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (**Դեկտեմբերի** 2-**րդ տասնօրյակ**)	**Կատարված է**: Թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին լրացուցիչ արտոնություն տրամադրելու նպատակով ՀՀ ՏՁՆՆ առաջարկել է սուբսիդավորել գործատուի կողմից վճարած եկամտային հարկի մի մասը (օրինակ՝ մեկ աշխատողի հաշվով մինչև 10 հազ դրամ), բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր վարձու աշխատողի եկամտային հարկի 50%-ը: Ընդ որում, արտոնությունը պետք է տարածվեր միայն հատուկ ռեեստրում ցուցակված կազմակերպությունների վրա և դրա տրամադրման համար անհրաժեշտ էր սահմանել կոնկրետ չափորոշիչներ, մասնավորապես՝ ընկերությունը պետք է գործունեություն ծավալեր բացառապես թեթև արդյունաբերության ոլորտում և այլն: Միաժամանակ, սեպտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում վերոնշյալ առաջարկի զեկուցումից հետո նպատակահարմար է համարվել ներկա փուլում այն հանել քննարկումից: Նախատեսվում էր ներդրումային ծրագրի շրջանակներում հումքատեսակների մասով ԱԱՀ-ի հետաձգում, որի վերաբերյալ մշակված որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 05.11.2017թ. N1225-Ն որոշմամբ: